


18152

Lehning



1912

ՃԵՐՈՒՅՆ ՎԻՇԱՅԵԱՆ.


237

Է Ծ Ի Դ Ե Ր Զ Ա Կ



ՎՕԴ. ՄԵԿ ԱՐԱՐՈՒԱՆՈՎ.

2003



ՅԱՀԱՆ Արշակ Յակոբեան և որդիք
1912 թ.

891.93

4-68

ԱՐ

ԺԵՐՈԽԻ ՎԻՐԱԲԵԱՆ.

ՄԱԿԱՐԱԳՈՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՇԻ ԴԵՐՁԱԿ



55 140
85-2'

1001
362

ՎԵԿ. ՄԵԿ ԱՐԱՐՈՒՄՆՈՎ.



ԵՐԵՎԱՆ

Տպարան „ԼՈՅՑՈՒ“ Արշակ Յակոբեան և որդիք

1912թ.

4139

ՆԻԿՐ ԻՐ ԸՆԿԵՐ

Կ. ՂՈՒԿԱՍԵԱՆԻՆ

ՀԵՂԻՆԱԼԻՄ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱԲՐՀԱՄ — փալանդուզ՝ 60 տարեկան։
ՍՈՒՐԵՆ — համալսարանաւարտ՝ 26 տար։
ԱՐՏՈՒՐ — նոյնպէս՝ 25 տար։
ՄԻՔԱՅԻԼ — այգեպահ՝ 48 տար։

ՕՀԱՆ — 62 տար։
ՄԻՄՈՆ — 55 տար. | Աբրհամի խանութիւնը հարկանները
ԿԱՐԱՊԵՏ — 49 տար։
ԽԱԶԱՏՈՒԹԻՒՆ — գործակատար՝ 32 տար։
ՎԱՐԴԱՆ — նոյնպէս՝ 20 տար։
ԳՐԻԳՈՐ — քաղաքապահ՝ 40 տար։
ՅԱԿՈՎՅ — հին ուսուցիչ՝ 59 տար։

Տևարտանը անրկայացնում է մէկ փողոց և ու մէկ խանութ. խանութի մէջ կամ ժղացուներ. խս խանութի կողքերին դրած են փաղանձներ։

§ Ե Ս Պ Լ 1

ԱԲՐՀԱՄ ՅԵՏՈՅ ՍՈՒՐԵՆ ԵՒ ԱՐՏՈՒՐ.

ԱԲՐՀԱՄ. (Վարագոյը բարձրանալիս Աբրհամը նստած շանութիւնում և մէկ փալան առաջին կարում է. (պատրաստած)։
ՍՈՒՐԵՆ ԵՒ ԱՐՏՈՒՐ. (Գալիս են փողոցի աջ կողմից և Աբրհամի առաջ կանգնում)։

ՍՈՒՐԵՆ. — Բարե վարպետ։

ԱԲՐՀԱՄ. (Գլուխ վերև բարձրացնելով) Աստծու հազար բարին։

ՍՈՒՐԵՆ. — Այդ ի՞նչ ես անում վարպետ։

ԱԲՐՀԱՄ. — Փալան եմ կարում որդի։

ԱՐՏՈՒՐ. (Բարձր) ի՞նչ։

ԱԲՐՀԱՄ. — Փալան եմ կարում, փալան։

ԱՐՏՈՒՐ. — Փալան ի՞նչ է։

ԱԲՐՀԱՄ. — Փալան էլի. փալան չես զիտում ինչ ա. էն որ գնում են էշի վրայ, վրէն բան բարձում, աէրն էլ նստումա ու էթում։

ՍՈՒՐԵՆ. — Վարպետ դու հայ ես։

ԱԲՐՀԱՄ. — Բա հօ թուրք չեմ.

ՍՈՒՐԵՆ. — Զէ, ինչու ես նեղանում:
 ԱԲՐՀԱՄ. — Չնեղանամ բա ի՞նչ անեմ. քու
 տունը չքանդուի, ախր ընէնց բան ես ասում:
 ԱՐՏՈՒ. — Առաջ խօմ թուրք չես եղել.
 ԱԲՐՀԱՄ. — Զէ այ աղբէր ես թուրք չեմ:
 ԱՐՏՈՒ. — Է ուրեմն հայ ես:
 ԱԲՐՀԱՄ. — Հա. Աստուած, երկինք. դետինք
 վկայ, որ ես հայ եմ:
 ԱՐՏՈՒ. — Խօմ պարսկաստանի հայերից չես.
 ԱԲՐՀԱՄ. — Զէ. Աստուած վկայ. ես իսկա-
 կան հայ եմ:
(Պառագա) — Ամօթ չլի հարցնելը. իսի էք հար-
 ցնում:
 ՍՈՒՐԵՆ. — Հէնց էնպէս:
 ԱԲՐՀԱՄ. — Էլի հէնց. իսի պտի հարցնէք
 իւէր ըլի:
 ԱՐՏՈՒ. — Ասումես հայ ես չէ:
 ԱԲՐՀԱՄ. — Հա, Աստուած վկայ. տունս
 քանդուի, էրեխէքս կտորուեն, թէ սուտեմ ասում:
 վայ. հայ քրիստոնեալ էք, հաւատացէք էլի:
 ԱՐՏՈՒ. — Իսկ ինչու ես թուրքերէն խօսում:
 ԱԲՐՀԱՄ. — Աղբէր էս ես, էդ էլ դուք. ես
 եք եմ թուրքերէն խօսել:
 ԱՐՏՈՒ. Իսկ էն ժամանակ ինչու խօսեցիք:
 ԱԲՐՀԱՄ. (Բարկացած) Աղբէր ես եք եմ թուր-
 քերէն խօսել. Տէր Աստուած. աղբէր դուք խաթա

էք. թէ տեղնստեղ նհախ շառէք աղբէր քաշուէք,
 գնացէք, ձեր գործին է Տէր Աստուած:
 ՍՈՒՐԵՆ. — Սպասիր վարպետ. մի նեղանար,
 խօսում ենք:
 ԱԲՐՀԱՄ. — Աղբէր խօսէք. համա ես եք եմ
 թուրքերէն խօսել:
 ԱՐՏՈՒ. — Ուրեմն չես խօսել չէ:
 ԱԲՐՀԱՄ. — Աղբէր ախր ես եք եմ թուրքերէն
 խօսել:
 ԱՐՏՈՒ. — Մենք եկանք քեզ ի՞նչ ասեցինք:
 ԱԲՐՀԱՄ. — Դուք էկաք, ինձ ասեցիք, թէ էդ
 ի՞նչ ես անում. ես էլ ասեցի էշի փալան եմ
 կարում էլ ըտեղ թուրքերէն բան կայ:
 ԱՐՏՈՒ. — Իսկ փալան ի՞նչ բառ է:
 ԱԲՐՀԱՄ. — Ոնց թէ ինչ բառ է. (Կոռալով) աղ-
 բէր հօ դուք խաթա չելմք իմ գլխին:
 ՍՈՒՐԵՆ. — Զէ վարպետ մի նեղանար խօսում
 ենք:
 ԱԲՐՀԱՄ. — Աղբէր բալքի դուք կարագ ու
 մեղք էք կերել որ խօսում էք. գնացէք, ես զլուխ
 չունեմ խօսելու. մէկ էլ, որ հիմի ձեզ հետ խօսում-
 եմ, բան չեմ կարում անել:
 ՍՈՒՐԵՆ. — կարիր էլի. խօմ քոձեռը չենք
 բոնում. չես կարող մեզ հետ էլ խօսել:
 ԱԲՐՀԱՄ. — Աղբէր դէ ինչ էք ասում. շուտ
 ասէք ու գնացէք:

ՍՈՒԻՐԵՆ.—ԶԵ մինեղանար որ ասումես, հայ
ես մենք էլ հայ ենք, եկել ենք խօսելու թէ չէ ին-
չու ես նեղանում:

ԱԲՐՀԱՄ.—Աղբէր դէ որ էկել էք. աչքիս
վրայ էք էկել դէ նստէք, խօսացէք:

ԱԲՏԱԿ.—Ո՞րտեղ նստենք վարպետ.

ԱԲՐՀԱՄ.—Էս փալանների վրայ:

ՍՈՒԻՐԵՆ.—ԶԵ ոչինչ կանգնած էլ լաւ է:

ԱԲՐՀԱՄ.—Դէ որ կագնած էլ լաւ ա, դէ հմի
ինչ էք ասում:

ԱԲՏԱԿ.—Ասեցիր էշի փալան եմ կարում չէ:
ԱԲՐՀԱՄ—Հա:

ԱԲՏԱԿ.—Ապա ինչու չես հայերէն խօսում:

ԱԲՐՀԱՄ.—Աղբէր խի՞ չեմ հայերէն խօսում:
Էշ էս: փալաննէլ փալանա էլի:

ԱԲՏԱԿ.—Փալան հայերէն բառ չէ, որ աս-
ում ես:

ԱԲՐՀԱՄ.—Ոնց հայերէն բառ չէ. էսա փա-
լան է, ես էլ փալանդուզ եմ էլ լսոէ ինչ կայ:

ԱԲՏԱԿ.—ԶԵ, դու փալանդուզ չես:

ԱԲՐՀԱՄ.—ԶԵ, այ աղբէր ես փալանդուզ եմ:
Աստուած վկայ. ես ուրիշ գործ չունեմ:

ԱԲՏԱԿ.—Ես էլ զիտեմ որ այդ գործին ես,
բայց «փալանդուզ» չեն ասիլ:

ԱԲՐՀԱՄ.—Ոնց թէ, էդ գործին ես, համա
փալանդուզ չես. աղբէր ինձ ծեռ էք առել.

ՍՈՒԻՐԵՆ.—ԶԵ վարպետ մի նեղանար, մենք
ասում ենք էդ գործին ես, բայց փալանդուզ չես:

ԱԲՐՀԱՄ.—Ոնց, բա ի՞նչ եմ, էշի գլուխ:

ՍՈՒԻՐԵՆ.—Այսինքն հայերէն այդպէս չեն
ասում փալանդուզին:

ԱԲՐՀԱՄ.—Բա ո՞նց են ասում, էսա փալան
եմ կարում, փալանդուզ կասեն էլի:

ՍՈՒԻՐԵՆ — Բայց հայերն այդպէս չեն ասում:

ԱԲՐՀԱՄ.—Բա ո՞նց են ասում:

ՍՈՒԻՐԵՆ — Հայերը:

ԱԲՐՀԱՄ — Հա:

ՍՈՒԻՐԵՆ — Հայերը քեզ կասեն՝ էշին դերձակ:

ԱԲՐՀԱՄ.—Էշի դերձակ:

ՍՈՒԻՐԵՆ — Այս:

ԱԲՐՀԱՄ.—Բայց ախտը ես դերձակ չեմ,
փալանդուզ եմ:

ՍՈՒԻՐԵՆ — Դէ հէնց այդ «փալանդուզը», որ
դուք ասում էք, կնշանակի էշի դերձակ:

ԱԲՐՀԱՄ — Ախր ձիու փալան էլ եմ կարում:

ՍՈՒԻՐԵՆ — Ոչինչ, ձիու դերձակ էլ ասայ:

ԱԲՐՀԱՄ.—Տէր Աստուած, ախր ես դերձակ
չեմ, փալանդուզ եմ:

ՍՈՒԻՐԵՆ.—Դէ ես էլ ասում եմ, որ էդ «փա-
լանդուզ», կնշանակի էշի դերձակ, որ առաջ ասեցի.
Հասկանում ես այդ «փալանդուզ» բառը թուրքե-
րէն բառ է. հայերը կասեն՝ էշի դերձակ:

ԱԲՐՀԱՄ.—Ախր ձիու փալան էլ եմ կարում:
ԱԲՏԱԿ.—Զիունն ես շատ կարում, թէ էշինը:

ԱԲՐՀԱՄ. — Էշինը,
ԱՐՏԱԿ. — Ուրեմն էշի դերձակ կասեն:
ԱԲՐՀԱՄ. — Աղբէր ես չեմ հասկանում. Աստուած
խէրն անի, էս քշերուայ երազս պտի կատարուի:
ԱՐՏԱԿ. — Վարպետ գուշուտ ես յուսահատուում:
սպասիր ես մեր այստեղ գալու պատճառը պատմեմ.
մենք երկուսս էլ հայ զաւակներ ենք. մենք աւար-
տել ենք բարձր դպրոցներ, ալժմ մենք նկատում
ենք, որ մեր հայ ազգը գործ է ածում օտարա-
ազգերի զանազան բառեր. այժմ մենք ցանկանում
ենք, որ դա մեր հայոց միջից վերանայ. և հէնց
դիտմամբ մենք եկանք քեզ հարցրեցինք, դու
էլ ասեցիր ես փալան եմ կարում և փալանդուզ
եմ. էդ փալանդուզ բառը հայոց բառ չէ. դա
թուրքերէն բառ է. հայերէն կլինի, ինչպես ես
դիտեմ, էշի դերձակ:

ԱԲՐՀԱՄ. — Աղբէր գուզն եմ ասում. կլեմ
վացուն տարեկան, էս ա որ լսում եմ որ փալան-
դուզին ասեն «էշի դերձակ» ախր մի ըտենց բան
ով էր լսել.

ՍՈՒԻՐԷՆ. — Գիտենք վարպետ. մինչեայժմ քո ասա-
ծըն էին գործ ածում. բայց սրանից յետոյ պիտի
վերացուի:

ԱԲՐՀԱՄ. — Ախր ոնց. հէնց մէկը ինձ ասի
թէ դու ինչ ես. է ես. ասեմ էշի դերձակ եմ:

ՍՈՒԻՐԷՆ. — Այո ինչ ամօթ բան է:

ԱԲՐՀԱՄ. — Զէ աղբէր. դա ըլելու բան չէ-
ըտենց որ ասեմ. վրէս կծիծաղեն:

ՍՈՒԻՐԷՆ. — ԱԲՐՀԱՄ. (Միասին) ընդհակառակը:

ՍՈՒԻՐԷՆ. — Ընդհակառակը. կասեն որ հայոց
ազգը հետզհետէ զարգանում է, առաջ է գնում,
յուսաւորւում է:

ԱԲՐՀԱՄ. — Աղբէր վախենում եմ ծիծաղեն.

Թէ չէ կասեմ:

ԱՐՏԱԿ. — Զէ, ընդհակառակը չեն ծիծաղիլ:

ԱԲՐՀԱՄ. — Դէ հմի փորձեմ, աեսնեմ ձեր
ասածը:

ԱՐՏԱԿ. — Լսիր վարպետ. հայերը այդպիսի
բառեր շատ են գործ անում դա պէտքէ հետզ-
հետէ վերացուի եթէ դու այդպէս ասես, էգուց
քո որդին էլ այդպէս կասի. յետոյ էլ թոռդ:

ԱԲՐՀԱՄ. — Բայց բոլոր փալանդուզները
ըտենց կասեն. թէ մէնակ ես:

ՍՈՒԻՐԷՆ. — Բոլորը կասեն, բոլորը:

ԱԲՐՀԱՄ. — Դէ որ բոլորն էլ ասեն, ես էլ
կասեմ ըտեղ հօ մի բան չկայ. ընենց պտի ասեմ
ընենց կասեմ էլի:

ԱՐՏԱԿ. — Զէ էդ մի կողմից միամիտ մնաբոլորը
կասեն. բայց սրանից յետոյ քեզ փալանդուզ
չասես այլ էշի դերձակ:

ԱԲՐՀԱՄ. — Շատ լաւ:

ԱՐՏԱԿ. — Ուրեմն կասեմ:

ԱԲՐՀԱՄ. — Համ:

ՍՈՒՐԵՆ. — Շատ լաւ. դէ ներողութիւն վարպետ, քեզ նեղութիւն տուեցինք:
ԱԲՐՀԱՄ. — Բան չկայ. ես ու դուք սաղըլենք.
ՍՈՒՐԵՆ. Եհ ԱԲՏ. (Քնում են փողոց ձախ կողմից):

§ Ե Ա Խ Լ 2:

Ա Բ Ի Ռ Հ Ա Մ:

ԱԲՐՀԱՄ. (Քիչ պառւզա) Ե ձեր հէրն անիծածմարդ են էլի. եկել են ինձ բան են սովորեցնում: (Ժողովրդին նայելով) Ախր դուք ասէք, էսքան վախտ նվ էր լսել, որ փալանդուզին ասեն. «Էշի գերձակ». (Ճիծաղելով) հը: էշի գերձակ. էկել են ինձ քերալագ տալու. ձեր անխելք հէրն անիծած. դրուստ որ. շատ կարգացողների գլխին խելք չկայ, թէ չէ, ախր փալանդուզին տսեն էշի գերձակ. (Քիչ պառւզա) Բայց թող փորձեմ ասել, տեսնեմ վերջը ի՞նչ կլի. հօ ինձանից բան չի պակսիլ: (Պառւզա սկսում է կարել)

§ Ե Ա Խ Լ 3.

ՆՈՅՆ Եհ ՄԻՔԱՅԵԼ:

ՄԻՔԱՅԵԼ. (Գալիս է փողոցի աջ կողմից, և կանգնում է Արքամի առաջ) Բարե ուստա:

ԱԲՐՀԱՄ. — Աստծու հազար բարին:

ՄԻՔԱՅԵԼ. — Ուստա ջան ինձ մի լաւ փալան է հարկաւոր:

ԱԲՐՀԱՄ. — Փալանը կտամ, համա ես էլ փառնդուզ չեմ:

ՄԻՔԱՅԵԼ. (Զարմացած) — Բա որ փալանդուզ չես, էլ խի՞ ես փալան կարում:

ԱԲՐՀԱՄ. — Փալան կարում եմ, համա փալանդուզ չեմ:

ՄԻՔԱՅԵԼ. — Ախր փալան ես կարում, էլ ո՞նց փալանդուզ չես:

ԱԲՐՀԱՄ. — ի՞նչ անենք:

ՄԻՔԱՅԵԼ. — Լաւ, փալանդուզ չես, բա ի՞նչ ես:

ԱԲՐՀԱՄ. — էշի գերձակ:

ՄԻՔԱՅԵԼ. — էշի գերձակ. (Ճիծաղելով) հա, հա, հա, հա, ախր դու գերձակ չես, փալանդուզ ես:

ԱԲՐՀԱՄ. — Զէ, ես փալանդուզ չեմ, էշի գերձակ եմ:

ՄԻՔԱՅԵԼ. — Լաւ, էդ ո՞ստեղից ես իմացել:

ԱԲՐՀԱՄ. — Ոնց թէ որտեղից ես իմացել, էնա ես էշի գերձակ եմ. էլի:

ՄԻՔԱՅԵԼ. — Ուրեմն գերձակ ես, էլ փալանդուզ չես:

ԱԲՐՀԱՄ. — Հա, էլ փալանդուզ չեմ:

ՄԻՔԱՅԵԼ. — Դէ որ ըտենց ա, ինձ փալանդուզ է հարկաւոր: (Սկսում է գնալ)

ԱԲՐՀԱՄ. — Կաց փալան ես ուզում, արի տամ էլի:

ՄԻՔԱՅԵԼ. (Վերադառնալով) Ախր ասում ես փա-

լանդուղ չեմ էշի դերձակ եմ դէ որ դերձակ ես,
Էլ ինձ հարկաւոր չես. ես հօ իմ էշի հմար ըլուզ,
չուխայ, եա արխալուղ հօ չեմ ուզում:

ԱԲՐՀԱՄ.—Փալան ես ուզում:

ՄԻՔԱՅԵԼ.—Հա:

ԱԲՐՀԱՄ.—Դէ արի տամ էլի:

ՄԻՔԱՅԵԼ.—Ախր ասում ես փալանդուղ եմ:

ԱԲՐՀԱՄ—Դէ որ առնում ես, արի աս, արի,
փալանդուղ եմ:

ՄԻՔԱՅԵԼ.—Բա խի՞ էիր ասում, որ էլ փա-
լանդուղ չեմ, էշի դերձակ եմ.

ԱԲՐՀԱՄ.—Հեծ, հէնց ընէնց:

ՄԻՔԱՅԵԼ. (կատաղած) Ո՞նց թէ. ինց ծեռ ես
առել, թէ քու էրեխէնեմ. (Ոտքով Արդհամին խփումէ):

ԱԲՐՀԱՄ.—(կանգնելով) Եաւաշ, խի՞ ես տալիս որ,
ՄԻՔԱՅԵԼ. (Սկսում է արագ խփել):

ԱԲՐՀԱՄ! (Գոռալով) Հաւար, հաւար. (Խոկոյն գալիս
են օհանը, Սիմոնը, կարապետը, խաչատուրը և գարդանը):

Պ Բ Տ Ա Ե Բ 1-ԻՆԻ

(Երկար ժամանակ սկսում են իրար խփել, և առջի է ունե-
նում մեծ իրարանցում):

ՎԱՐԴԱՆ. (Գոռալով) Գրադաւօ, գրադաւօ:

Տ Ե Ա Ա Լ 5.

ՆՈՅՆՔ եհ ԳՐԻԳՈՐ.

ԳՐԻԳՈՐ. (Վաղելով գալիս է փողոցի աջ կողմից և

ՏԵՇԵԼով ընկնում է մարդկանց մէջ) Էղ ի՞նչ ա, էղ ի՞նչ ա-
ԱԲՐՀԱՄ. (Միքայելին ցոյց տալով) ըսա, ըսա ա-
ինձ ծեծում. բոնի, տար պօլիցէն:

ԳՐԻԳՈՐ. Սկսում է միքայելին խփել) Արի էթանք:
ՄԻՔԱՅԵԼ.—Տօ այ աղբէր խի է:

ԳՐԻԳՈՐ. (Սկսում է կրկին խփել) Արի. քեզ ասում
եմ:

ՎԱՐԴԱՆ.—Շեփի, զբա հէրն անիծած շեփի:
ՄԻՔԱՅԵԼ. (Գրիգորին ցոյց տալով) Աղբէր ախր խի՞ կամ է.

Էի իմացի, թէ ի՞նչ եմ արել, ի՞նչ մեղք ունեմ,
յետոյ...

ԳՐԻԳՈՐ.—Ո՞վ էր քո հետ կոիւ անողը:

ՄԻՔԱՅԵԼ. (Արդհամին ցոյց տալով) ըսա ա կոիւ
արել:

ԳՐԻԳՈՐ. (Արդհամի ձեռից ըսնելով) Արի դու էլ
էթանք:

ԱԲՐՀԱՄ. Աղբէր ախր ես խի կամ է:

ԳՐԻԳՈՐ. (Բարձր) Արի, ես քեզ ասում եմ:

ՕՀԱՆ եհ ՄԻՄՈՆ (Գրիգորին) ըսա չէ կոիւ անողը:

ՄԻՄՈՆ. (Միքայելին ցոյց տալով) ըսա ա էկել,
մարդու դուքանը մտել, և ծեծել:

ԳՐԻԳՈՐ.—Ինչ որ էլ ըլի թող գայ:

ԿԱԶԱՑՈՒՐ. (Գրիգորին) Զէ, չէ, դա չէ կոիւ
անողը դրան թող, նրան տար:

ԳՐԻԳՈՐ. (Արդհամին թողնելով, և միքայելին քաշելով)
Արի:

ՄԻՔԱՅԵԼ. — Աղբէր խի՞ կամ է։
ԳՐԻԳՈՐ. (Սկսում է սաստիկ խփել)։
ՄԻՔԱՅԵԼ. Աղբէր ախր խի՞ ես ծեծում է։
ՎԱՐԴԱՆ. — Տուր, դրա հէրն անիծած. (ոսքով)
Միքայէլին խփումէ)։
ՄԻՔԱՅԵԼ. (հետ է նայում և Վարդանին խփում)։ Գո՞ւ
խի ես ծեծում հ՞ը. դո՞ւ ընչացու ես։
ՎԱՐԴԱՆ. ԵՒ ՄԻՔԱՅԵԼ. (Իրար խփումէն)
ԳՐԻԳՈՐ. (Միքայէլից ամուռ քաշում է, և խփում)։ Քեզ
ասում եմ, արի էթանք պօլիցէն։
ՄԻՔԱՅԵԼ. — Աղբէր ախր խի՞ է։
ԽԱՉԱՏՈՒՐ. (Միքայէլին) Խի ու զահուրումար,
դէ որ ասում ա, գնա էլի։
ԳՐԻԳՈՐ. (Խփելով տանում է) Արի քեզ ասում եմ,
թէ չէ կատկացնեմ ծեծելով։
ՄԻՔԱՅԵԼ. Աղբէր ախր խի՞ է. (Գնում էն)

8 Ե Ա Լ 6.

ՆՈՅՆԻ ԱՌԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ԵՒ ՄԻՔԱՅԵԼԻ.
ԿԱՐԱՊԵՏ. (Աբրհամին) Էղ ի՞նչ նաղլ էր է։
ԱԲՐՀԱՄ. — ը, ը։
ԿԱՐԱՊԵՏ. — Հա դրուստ էղ ի՞նչ նաղլ էր։
ԱՅԻՀԱՄ. — Տօ ջանմ, էրկու տղայ էկան, ոչ
բարով գային. է. եկան. հարցըին էղ ի՞նչ ես
անում. ասեցի փալան եմ կարում. է, շատ խօսե-
ցին, վերջը ասեցին, դու ի՞նչ ես. ես էլ ասեցի
փալանդուզ եմ. էն հմի դրանք ի՞նձ ասեցին, թէ

դու էլ փալանդուզ չես՝ էշի դերձակ ես (ընդհանուր
ծիծադ)։
ՎԱՐԴԱՆ. (Ճիծաղելով) չա, հա, հա, հա, էշի
դերձակ։

ԱԲՐՀԱՄ. — Է յետոյ աղբօրտանցս ասեմ ասե-
ցի այ տղէրք հօ ինձ ծեռ չէք առել ախր ո՞վ ա-
լսել, որ փալանդուզին ասեն էշի դերձակ. ախր
մի ըտենց բան ո՞վ ալսել տօւնը քանդուի,
վերջը, ձեր զլուխը ի՞նչ ցաւացնեմ, ինձ շատ
ասեցին. որ եթէ մի մարդ գայ, քեզ ասի, թէ
դու ի՞նչ ես, էլ չասես թէ ես փալանդուզ եմ
կասես էշի դերձակ եմ. ես էլ ասեցի կասեմ. մէկ
էլ մտքումս ասեցի. հալբաթ մի բան են զիտում,
որ ասում են, էլի ի՞նչը ան չըլի կարգացող են.
գնացին թէ չէ, էդ կրակը էկաւ. ասեց ուստայ
մի փալան եմ ուզում, ես էլ հանաք դէյին ասեցի,
փալան կտամ, համա փալանդուզ չեմ ասեց. բա-
ի՞նչ ես, ասեցի էշի դերձակ եմ. յետոյ մի քիչ
տեղ գնաց, ասեց, ես փալանդուզին եմ ուզում,
դերձակին չեմ ուզում ասեցի դէ արի տամ, եկաւ
մի քիչ մնաց, ասեց, բա ընչի էլիր ասում թէ
ես փալանդուզ չեմ, դերձակ եմ. ես էլ ասեցի.
հէչ հանաք արեցի. էդ որ ասեցի, մի հատ ինձ
հասցըեց, ես էլ վեր կացայ, մինչեւ հանգը հունդը
որ մի էրկու էլ ես տամ, էն էլ դուք էկաք. ՎՐԱՅԻՐԱՑ
ՎՈԼՈՅՈՒՅ ՎԱՐԴԱՆ. Խաչնկան
* Ա. ԱՅԱՆԿՅԱՆԻ ԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏ. — Ը. էնքան տուեցինք, որ էլ վրին
հալ մնաց:
ՎԱՐԴԱՆ. — Պատի շատ ծեծած ըլէլինք. չէ:
ԿԱՐԱՊԵՏ. — Հէնց շատ էլ ծեծեցինք սկի մի
խօսա:
ԽԱՉԱՏՈՐ. — Համա գրադաւոն էլ շատ ծեծեց հա:
ԿԱՐԱՊԵՏ. — Տօ սատկացրեց էլի:
ՎԱՐԴԱՆ. Տօ բա ես ոնց էի տալիս էլ ձե-
ռով, էլ քացով:
ՕՀԱՆ. (Աբրամի մեջքին կամաց խփելով) Մի վախենա.
քանի մենք սաղ ենք, ըստեղ կանք, քեզ մարդ
ծեռ չի կարալ տայ. քէֆդ քօք պահի (դառնալով
Սիմոն) Սիմօն, արի գնանք,
ՍԻՄՈՆ. — Կալիս եմ. (դառնալով կարապետին) Կա-
րապետ, արի գնանք:
ԿԱՐԱՊԵՏ. — Կնացէք, հլա ես չեմ կալիս:
ՕՀԱՆ եհ ՍԻՄՈՆ. (դնում են)

ՏԵՍԻԼ. 7.

ՆՈՅՆՔ ԱՌԱՆՑ ՕՀԱՆԻ ԵՒ ՍԻՄՈՆԻ, ԵՒ ՅԵՏՈՅՑ ՀԱԿՈՎՔ.
ԿԱՐԱՊԵՏ. — Ասում ես ըտենց չէ աբրհամ
բիձա. քեզ էլ մի էրկու տուին:
ԱԲՐՀԱՄ. — Է:
ՎԱՐԴԱՆ. — Մի ասի. Աբրհամ բիձա, որ
մենք էլ նրան շատ տուինք:
ՅԱԿՈՎՔ. (դաւիս է փողոցի աջ կողմից) Էդ էնչ է, որ էդ-

ալէս հաւաքուել էք:
ԿԱՐԱՊԵՏ. — Հէչ, ի՞նչ պարի:
ՅԱԿՈՎՔ. — Իսկապէս ի՞նչ է պատահել:
ԽԱՉԱՏՈՐ. (Յակովքին) Աբրհամ բիձին էին
մի էրկու տուել:
ՅԱԿՈՎՔ. — Ինչո՞ւ:
ԽԱՉԱՏՈՐ. — Մի էրկու տղայ, եկել էին
դրան ձեռ էին առել, թէ դու էլ փալանդուզ չես,
էշի դերձակ ես. յետոյ մէկն եկել, փալան է ուզել
Աբրհամ բիձին ասելա էշի դերձակ եմ, դրա հա-
մար մի երկու անդամ տուել ա:

ԿԱՐԱՊԵՏ. (Յակովքին) Էն էրկու տղէրքն էին
ծեռ առել, թէ դու էշի դերձակ ես:
ՅԱԿՈՎՔ. — Ընդհակառակը ձեռ չեն առել, լաւ
են ասել, մարդիկ խելօք են եղել. ուզեցել են,
որ օտարազգերի բառերը մեր. հայոց միջից
վերանայ. և երանի էն ժամանակը, երբ իսպառ
կվերանայ ո՞վ է ասում. թէ ձեռ են առել շատ
խելօք են ասել. և եթէ այդպիսի կրթուած,
ուսում առած պատանիները իրենց ազգի մասին
չմտածեն, ազգը միշտ խաւարի մէջ կմնայ. ընդ-
հակառակը ես շատ ուրախ եմ, որ մեր հայ պատա-
նիները սթափուել են, և դառել են իդէալիստ.
այո, ես շաւտ ուրախ եմ. (գնում է փողոցի ձախ կողմից)

§ Ե Ա Խ Լ 8.

ՆՈՅՆՔ ԱՌԱՆՑ ՅԱԿԱՎԲԻ.

ԿԱՐԱՊԵՏ. (Յակովը հասցէին) դա էլ ընդրանցից
ա. նրա համար ա. ասում, որ լաւ
են արել.

ԱԲՐՀԱՄ. — Էդ ուսումնագէտների հէրն անի-
ծած. հը. թէ ըտրանց զլխին մի կապէկի խելք կայ:

ՎԱՐԴԱՆ. — Տօ բրադի փշում են էլի:

ԽԱԶԱՏՈՒԹ. — Աբրհամ բիձա ասում ես էրկու.
աղայ եկան, ասեցին որ էլ փալանդուզ չես, էշի
գերձակ ես հա:

ԱԲՐՀԱՄ. — Տօ բա. (Ընդհանուր ծիծաղ բացէ
Աբրհամից)

ՎԱՐԴԱՆ. — Աբրհամ բիձայ քեզ ծեռ են առել:
ԱԲՐՀԱՄ. — Տօ Բա որ ծեռ առնել չլի, կգան կա-
սեն թէ դու էլ փալանդուզ չես, էշի գերձակ ես.
ախը մի ըտենց բան ո՞վ էր լսել, դուք լսած
կաք որ փալանդուզին ասեն, էշի գերձակ:

(Ընդհանուր ծիծաղ)

Պ Ա Բ Ա Ց Ա Բ



ԿԱՐԵՒՈՐ ՎՐԵՊԱԿՆԵՐ

9 երես տասերորդ տող, էշին գերձակ, -ոլէտք է
լինի, էշի գերձակ:

11 երես երրորդ տող, Սուրէ և Աբրհամ, -ոլէտք է
լինի, Սուրէն և Արտակ:

תְּהִלָּה נֶאֱמָנָה

18157

ԳԻՆԻ Ե 25 ԿՈՊԵԿ

ցանկացողները կարող են դիմել՝ Թրիվան
Астафьевская ул. № 82. Церунъ Вирабянъ.

2013

